# ԹՈՒՐՔԻԱ ԵՒ ԱԴՐԲԵՋԱՆ

Չափազանցութիւն չի լինի, եթէ ասենք, որ ԽՍՀՄի բոլոր թրքախօս ժողովուրդներից զատ, Թուրքիան մի «յատուկ յարաբերութիւն» ունի ադրբեջանցիների հետ, որոնք հիմնականում բնակւում են Վրաստանի, Հայաստանի եւ Դաղստանի հարեւանութեամբ գտնուող Ադրբեջանում: Այս բոլոր թրքախօս ժողովուրդների կողմից օգտագործուող բարբառները շատ մօտ են Անատոլիայում եւ Թրակիում գործածուող թուրքերէնին:

Թուրքիայի հիւսիս-արեւելեան մասերում այժմ բնակւում են Ադրբեջանից արտագաղթածները: Այս երկու ժողովուրդները միշտ էլ ընդունել են իրենց ազգակցական կապը: ԽՍՀՄում հրապարակայնութեան եւ վերակառուցման քաղաքականութեան շնորհիւ զարգացման նոր եւ կարեւոր հնարաւորութիւններ են ստեղծուել:

Իսկ Ադրբեջանում տեղի ունեցած վերջին իրադարձութիւններն ադրբեջանցիներին ու թուրքերին աւելի մօտեցրին իրար: Եօթ տասնամեակների ընթացքում այս երկու երկրների կապերը հիմնուած են եղել խորհրդա-թուրքական քաղաքականութեան մակարդակների վրայ:

Թուրքիան եւ Ադրբեջանը, միութենական հանրապետութիւններին ընձեռնուած նոր իրաւունքների պայմաններում, համագործակցելու աւելի մեծ ցանկութիւն են ցուցաբերում:

Ադրբեջանի յարաբերութիւններն իր հարեւանների, այդ թւում Հայաստանի եւ Թուրքիայի հետ մեծ չափով իրենց վրայ են կրում Լեռնային Ղարաբաղի եւ նրա շուրջը ծաւալուած իրադարձութիւնների կնիքը:

Հայաստանի այն յայտարարութիւնները, թէ 1920թ. Ադրբեջանին միացուած Լեռնային Ղարաբաղում տնտեսական եւ սոցիալական խտրականութիւն է տեղի ունենում, ճշմարտացի չեն թւում: Վերջին երեք հնգամեակների ընթացքում արդիւնաբերական ապրանքների արտադրութիւնն այստեղ եռապատկուել է, իսկ գիւղատնտեսութիւնը զարգացել է 50 տոկոսով: Ադրբեջանում համապատասխան ցուցանիշները բաւական ցածր են: Ինչ վերաբերում է Նախիջեւանին, ապա նրա եւ Ադրբեջանի միջեւ գտնւում է Հայաստանին պատկանող 30 մղոնանոց (48 կմ) մի տարածք: 300 հազարանոց ադրբեջանաբնակ այս ինքնավար հանրապետութիւնը 1988ից սկսած միշտ գտնուել է Հայաստանի կողմից փաստացի պաշարման մէջ: Չնայած Նախիջեւանի եւ Ադրբեջանի միջեւ երկաթուղային կապ կայ, բայց հայ զինուած հրոսակախմբերի կողմից յաճախ է խզւում կապը ադրբեջանական երկու մայրաքաղաքների միջեւ:

Հայերը փորձում են նաեւ քրդական հարցը իրենց օգտին ծառայեցնել: Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի միջեւ քրդերով բնակեցուած վայրերն են Կուբաթլին, Լաչինը եւ Քելբաջարը, որոնց հայերը դիտում են որպէս բուֆերային գօտի, եւ յոյս ունեն, թէ մի օր դրանք պաշտօնապէս ինքնավարութիւն կը ստանան:

Ադրբեջանցիները Վրաստանի հետ եւս ունեն տարաձայնութիւններ՝ կապուած վերջինիս սահմանամերձ շրջաններում մօտ կէս միլիոն ադրբեջանցիների գոյութեան փաստի հետ, որտեղ ղեկավար բոլոր պաշտօններում գտնուող վրացիների կողմից այնպիսի պայմաններ են ստեղծւում, որ նրանք արտագաղթեն:

Ի հակադրութիւն Վրաստանի եւ Հայաստանի, Ադրբեջանում իշխանութիւնը դեռեւս համայնավար կուսակցութեան ձեռքում է, որն էլ տնտեսական անկախութիւն ձեռք բերելու փորձերով, ցանկանում է իշխանութեան ղեկը բաց չթողնել:

Որպէս հայ-ադրբեջանական բախումների արդիւնք, ծնուեց Ադրբեջանի Ժողովրդական Ճակատը (ԱԺՃ), որը ցանկանում էր արտացոլել հասարակութեան տրամադրութիւնները: Այդ կազմակերպութիւնն աւելի ժողովրդական դարձաւ 1990թ. Յունուարի 20ի իրադարձութիւններից յետոյ, երբ խորհրդային բանակը մտաւ Բաքու: Բայց դրանից ինը ամիս յետոյ տեղի ունեցած ընտրութիւններում Ադրբեջանի խորհրդարանի 434 տեղերից նրանք որպէս ընդդիմութիւն միայն 32ը կարողացան գրաւել՝ մնացածը թողնելով համայնավարներին: Այս երկու քաղաքական ուժերի միջեւ եղած տարաձայնութիւններն այնքան խորն են, որ խորհրդային բանակի յետ քաշուելու դէպքում նրանց միջեւ հնարաւոր են բախումներ: Բայց նոր եւ արդար ընտրութիւնների յոյս է ծագում:

Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալը եւ պաշտօնատար անձանց մի մեծ պատուիրակութիւն Բաքու ժամանեց 1991թ. սկզբներին, որին հետեւեցին հայ-ադրբեջանական նոր բախումներ: Եւ ադրբեջանցիները անկախ տարբեր խմբաւորումներին իրենց մասնակցութիւնից, կոչ արեցին միաւորուել որպէս մշակութային եւ արիւնակցական ընդհանրութիւն եւ ցանկութիւն յայտնեցին համագործակցութիւն սկսել բոլոր թրքախօս ժողովուրդների հետ: Չնայած «գորշ գայլ»ի տարբերանշանները չփոխարինեցին մուրճ ու մանգաղին, բայց գոյացաւ Թուրքիայի հետ յարաբերութիւնները բարելաւելու մի պատրաստակամութիւն:

Օզալի Բաքու կատարած այցն ուղեկցուեց Ադրբեջանի մայրաքաղաքում թուրքական ընդհանուր հիւպատոսութեան բացումով, համաձայնագրի ստորագրումով եւ միացեալ մի յայտարարութեան ընդունումով:

1991թ. Մարտի 16ի այս պայմանագրով նախատեսւում էր զարգացնել երկու երկրների միջեւ հաղորդակցական կապը, յատկապէս ուշադրութիւնը դրւում է շինարարական խնդիրների վրայ՝ կապուած Թուրքիայի եւ Ադրբեջանի միջեւ կառուցուող կամուրջների հարցի հետ: Օդային կապը Ստամբուլի եւ Բաքուի միջեւ արդէն իրականացուել էր, իսկ միջազգային հեռուստատեսային ծրագրերին Ադրբեջանի հեռուստակապը իրականացւում է Թուրքիայի միջոցով:

Այն փաստը, որ Ադրբեջանն իր հայեացքը որպէս եղբայրական երկիր ուղղել է դէպի Թուրքիա, պարզորոշ երեւում է վերջերս հրապարակուած «Տնտեսական հրաշքներ Ադրբեջանական կողմը Թուրքիայից մեծ աջակցութիւն է սպասում» գրքի վերնագրից: Այն իր մէջ որոշ առումով ներառում է Թուրքիայի եւ Հայաստանի միջեւ յարաբերութիւնների կարգաւորման նկատմամբ քննադատական մօտեցում: Օրինակ՝ Ազգային Ճակատը մի հեռագիր է յղել նախագահ Օզալին այն բանից յետոյ, երբ Հայաստանի մայրաքաղաք էր ժամանել Թուրքիայի դեսպանը:

Ադրբեջանը Թուրքիայի հետ չունի ընդհանուր սահման: Մօտ 6 մղոնանոց (10կմ) սահման կայ միայն Նախիջեւանի հետ: Թուրքերն ու ադրբեջանցիներն իրար հետ կապւում են Հայաստանի միջոցով: Բաքուի պաշտօնատարները պնդում են, թէ մի ուղիղ ճանապարհ պէտք է բացուի՝ Նախիջեւանը կապելով Թուրքիայի տարածքի հետ: Նախատեսուող այդ ճանապարհի վրայ է գտնւում Սադարակ գիւղը եւ հայերը ցանկանում են իրենց հսկողութիւնը պահպանել այստեղ:

Սադարակի դիմաց գտնուող ադրբեջանական Քերքի գիւղը գրաւուած է հայերի կողմից: Եւ այժմ ադրբեջանցիների համար Թուրքիայի հետ ուղիղ ճանապարհ ունենալը շատ կարեւոր է համարւում, մի ճանապարհ, որին հայերի կողմից ոչինչ չսպառնայ: Վերը բերուած օրինակով պարզ է դառնում, որ տնտեսական խնդիրները սերտօրէն կապուած են աշխարհագրական դիրքերի հետ:

**«ԹԻՒՐՔԻՇ ԴԷՅԼԻ ՆԻՒԶ»**